

Հայ Երուսաղեմը Օտար

Ունկնդիրներուն

Թէեւ բոլորը կը խօսին թէ ինչ նշանակութիւն ունի Հայ Երուսաղեմը հայերուս համար, ինչպէս նաեւ քրիստոնեաներու համար, բայց թերեւս շատ քիչեր գիտեն թէ ինչ բանի մէջ կը կայանայ անոր իմաստը, եւ մանաւանդ այն հոգին, որ կը պահէ զայն:

Ահա նիշտ այդ մասին էր 2 Դեկտեմբեր 1995ի, երեկոյեան ժամը 7:30ի դասախօսութիւնը, որ տրուեցաւ Ամենապատիւ Տէր Թորգոմ Պատրիարք Մանուկեանի կողմէ Նոթր Ծամի սրահներէն մէկուն մէջ, եւ սահիկներ ցուցադրուեցան Հոգշ. Տէր Բագրատ Արդ. Պարմէքեանի բացատրութիւններով:

Ճիշտ այդ հոգիին մասին էր որ կեդրոնացուց իր դասախօսութիւնը Պատրիարք Սրբազան Հայրը, որ շեշտեց մեր ժողովուրդի գոյատեւման ամենակարեւոր ազդակը, սկսելով իր դասախօսութիւնը քրիստոնեային համար առաջին նահատակէն, Թադէոս Առաքեալէն, եւ իր հեթանոս թագաւորահօր Սանատրուկին սերէն աւելի Քրիստոսի սերը նախընտրող Սանդուխտ կոչելէ:

Մեր ժողովուրդը եղած է հոգիի ժողովուրդ, եւ ի վերջոյ յաղթանակը հոգիին է...

Պրոֆ. Քիրմէլ իր «բարի Եկաք»ով սկսած բացման խօսքին մէջ, տուաւ նաեւ հարուստ կենսագրականը Պատրիարք Սրբազան Հօր, յիշելով անոր հայ գրականութեան, հայոց պատմութեան եւ հայկական երաժշտութեան հանդէպ մասնաւոր հետաքրքրութիւնը:

Հրաւիրելէ առաջ դասախօս Պատրիարքը, խօսք առաւ Նոթր Ծամի վերահսկիչ Մոնսէնիօր Մաթէսը, որ անչափ գոհ էր այդ դասախօսութեան իրականացումէն եւ յայտնեց իր խորին շնորհակալութիւնները:

Ոգեւորուած կը խօսէր Թորգոմ Պատրիարքը որ իր ազգի պատմութիւնն էր որ կու տար ամենապարզ

եւ խորունկ ձեւով օտարներուն եւ ինչու չէ հայերուն, որոնց թերեւս այդ ձեւով լուսարանուած չէին մեր պատմութեան կարեւոր շրջանները:

Սանդուխտ կոչելէն գալով Հրդիսիսմեանց կոյսերուն, անոնցմով խնդրեցաւ հայ թագաւորին, յայտնեց թէ անոր տանջող խիղճը ամբողջ ազգութեան մը ընդունիլ պիտի տար՝ քրիստոնեայինը:

Նոյնիսկ մեր պատմութեան ծանօթ մարդիկ մեծ հաճոյքով կ'ունկնդրէին, որովհետեւ նիւթը կը մատուցուէր, չնայած կարն ժամանակի մէջ բայց խորունկ եւ կարեւոր անցուղարձերու նիշտ մեկնաբանութեամբ:

Դառնալով «Հոգիի» հարցին, «Տը Արմինիլը Սրիւրիդ» ինչպէս կ'ըսէր Պատրիարք հայրը, այդ դիւրին չէ հասկցնել օտարին, որովհետեւ այդ՝ հասկնալէ աւելի զգալ կ'ուզէ, եւ պէտք է ըսել, որ օրուան դասախօսը յաջողեցաւ:

Գալով յայտագրին երկրորդ բաժնին, նոյնքան հետաքրքրական էր եւ մանաւանդ լաւ պատրաստուած:

Երիտասարդ հոգեւորականը՝ Բագրատ Արեղան որ այժմ կ'ուսանի Երուսաղեմի Երրայական համալսարանին մէջ, մանրամասն ու նշգրիտ բացատրութիւններով եւ տեղեկութիւններով մեկնաբանեց ցուցադրուող սահիկները, որոնք կ'ընդգրկէին հայերու պատմութիւնը Երուսաղեմի մէջ 4րդ դարէն:

Հայր Բագրատ սահուն անցլերէնով, բծախնդրօրէն իր պատրաստած բաժինը ներկայացուց հիանալիօրէն: Սահիկներու ցուցադրութեան պատասխանատուն էր Տիար Սարօ Նազգաշեանը, որ սահիկներուն նկարիչն ալ էր:

Այս կարեւոր եւ յաջող դասախօսութիւնը վստահաբար հասաւ իր նըպատակին, որովհետեւ հոնկէ մեկնողները անպայման բան մը տարին իրենց հետ:

Դասախօսութենէն հտֆ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:

Ներկայ մը